

# ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

## ԼՐԱԳԻՐ

### ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

ENCYCLOPEDIÉ (مجموعة علوم)

ԽՄԲԱԿԱՆՈՒՄ

Ղ. ԲՈՒԱՏ

ՏԵՕՐԷ

Վ. Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻՒ 9

1898 ՄԱՅԻՍ 2

Ամեն յոգի համար Ցառեկան կանխիկ 50 դահ: Վեցամսեայ 25, իսկ եռամսեայ 13 դահ: Օտար երկրաց համար Ցառեկան կանխիկ 15 Զրահ: Թղթաւորի ծախքը խմբագրութեան կը վերաբերի: Հար 40 փարայ: Դաւառներէ բօսքի բաւ ալ կ'ընդունուի 100 դրուցի սեղ 105 դրուց:

#### ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԻՀՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ — Ստուգաբանական բառարան. — Ե.  
ԴԻՏՈՂՆ. — Նիւթապաշտի իտէալներ. — Դպրոցէ ներս:  
Վ. Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆ — Գրչի զբօսանքներ — Մայրը:  
ՍԱՐԳԻՍ Յ. ՊՈՂԻԿԵԱՆ. — Տերսիմ. — Մնձուր լեռը կամ Օվաճրգի  
դաշտը:  
Ղ. ԲՈՒԱՏ. — Պարտիզպանական. — Պատուաւոր:  
Ղ. ԲՈՒԱՏ. — Ժիլօքսերայի համար. — Պատասխան թիւ 40, առ Մ. Ն. Մ.  
— Նուազ տտրածուծեամբ հողի վրայ ի՞նչ մշակելու է որ տէրը  
օգտուին — Պատ. թիւ 8, առ Մ. Ն. Մ. Իզմիր:  
Ղ. ԲՈՒԱՏ. — Ներամարդուծուծիւնը — Բասթօռեան գրութիւնով:  
ԱՐԱՔՍ — Առտնին առողջապահականք — Մազերու պահպանում. —  
Գիշերուան օգը:  
ԱՐՈՒԵՍԱԳԵՏԸ — Արհեստական գիտելիքներ — Զորցած գաճը հանե-  
լու միջոց: — Ոսկեզօծեալ սղինձէ առարկաները առանց գծգծե-  
լու մաքրել:  
Թղթակցութիւնը Հանրագիտակի: — Նուէր: — Զբօսանք. — Հանելուկ:

#### Հատը 40 փարայ

Կ. ՊՈՒԼԻՍ

ՅՊԱԿՐԱԿԻԹԻՒՆ Ս. ՆԻՆՈՂՈՍԵԱՆ

Կ. Պոլիս Զանաւնիլար եօզուեռ Զիւմպիլիլե համ թիւ 28

## ՉՐՕՅԱՆՔ

### ՀԱՆՏԵԼՈՒՆ ԹԻՒՒՄ

Քնակարանս է փոքր պարկեր,  
Աղքատ, հարուստ, տղայ և ծեր,  
Թէ կին, թէ մարդ զիտ կը կրեն  
Շատ պէտքեր ալ ինձ կ'վերագրեն,  
Եւ յիրաւի մարդու պիտոյք մ'եմ,  
Ու խոնարհ ծառայ, գերի չ'ըսեմ,  
Ձայն չեմ հաներ, թէ զիտ ընես,  
Կտոր, կտոր, երեքի բաժնես,  
Ճիշդ մէջտեղը կ'գտնես մի բառ  
Որ առաւօտը ամբողջն ի ձեռին  
Կերկարէ քեզ ու կըսէ «առ»  
Դու կ'գրպանես այն թեթեւ բեռն:

Յետ այսու դրօտանք վերնագրին տակ պիտի գնենք նկար հանելուկներ և հանելուկներ, որոնք ժամանցէ մը ի գաւա մտքի արթնութեան ալ յեծասպէս կը նպաստեն:  
Պատասխանները մինչեւ երեքշաբթի, 12 մայիս:



- Երկու ծանօթներու մէջ.
- Խեղճ ըլլայ, ի՞նչ, աչերդ ուռեցեր են:
  - Ձգէ եղբայր, գիշերը չեմ քնացեր:
  - Պատճառը.
  - Եղբայր տունի մըտկները, հանրագիտակի մէջ հրատարակուած մըտկի պատկերին չափ խոշոր են:
  - Է՛ պատկերը կը տեսնաս նէ, ինչո՞ւ միջատառպան փոշիէն չես առներ:
  - Քանի անգամ առի օգուտ չըրաւ:
  - Էմբրոն Սպանեանէն առի՞ր:
  - Ոչ:
  - Ուրեմն գնա անկից առ, և տես թէ մէկ մըտկ մը պիտի մնայ տանդ մէջ:

## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՃԻՀԱՆ

### ՄԻՀՐԱՆ ԷՖԷՆՏԻ ԳՐԱՏԱՆ

Պապա Ալի Կասէտի թ/ւ 73

ձոխ բացատրութիւն կալուածական օրինաց  
(Քիչիւշեթ շէհրի գանունը արագի)

Համբաւաւոր դրողէս և օրինադէս Խալիս Էշրէֆ Էֆէնտի սոյն օգտակար և ազուր գործը որ երկու հատոր է և իւրաքանչիւր հատոր չորս հարիւր երեսէ կը բաղկանայ, խիստ գիւրահասկնալի լեզուաւ կը խօսի մանրամասնօրէն Ֆէրաղի, Ինթիգալի, Մէհլուլաթի, Միւրուրի գէմանի և ասոնց յարակից նիւթերու վրայ. այնպէս որ քիչ թէ շատ թուրքերէն կարդացողներն իսկ պիտի կարողանան հասկնալ և օգտուիլ:

Հրատարակուած է Ս. հատորը, ի գին 13½ դրուշ. գեղեցիկ թուղթովը 18½, երկու հատորին բաժանորդագրութիւնն է 20 դրուշ. Գաւառաց համար 25 դրշ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՐԳ

Ս. ՊԱՏԱՐԱԿԻ

ԵՌԱԶԱՅՆ ԵՐԵՅՈՂՈՒԹԻՒՆ

Վաւերացեալ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԷՆ

Ձայնագրեց

ԼԵՈՆ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

«Ս. Պատարագի Եռաձայն Երգեցողութիւն»ն Մամլոյ տակ լինելով ամեն անոնք որ ունենալ կ'փափաքին, կը խնդրուի որ հաճին գիմել «Մամուրեան Տպարան»ն յիշմիր և այժմէն յայտնել թէ քանի օրինակ կուգին ունենալ սոյն եռաձայն երգեցողութիւնէն, փոխարէնը կանխիկ զրկելով, որովհետեւ սակաւաթիւ պիտի լինին սոցադրելի օրինակներն:

### ՄԼՈՒԿՆԵՐԷ ՄԻ ԶԱՐԶԱՐՈՒԻՔ

Մլուկները որ շատ աւելի կը գտնուին Գուժ-Գաբուի կողմերը, սկսած են իրենց անտառներէ ներկայութեամբ պատուել:

Մի նեղուիք,

Դիմեցէք Խաչիկ Ֆէսճեանի դեղորանը, Լանկա Ալաճա Մէսճիտ թիւ 9, հոն պիտի գտնէք մլուկի փոշի Բաշ, և միանգամայն ամեն գրպանի դիւրամատչելի:



յերէն ըլլալը կամ չըլլալը Հիւնքեարդ պէյէնտեան մութի մէջ թողուցած է, անշուշտ անով իր յանցանքը աւելի կը ծանրանայ:

Ի՞նչ ըսել կ'ուզէ Դ. Խ., իր մեղադրանքը քննադատի՞ն կ'ուղղուի՞ թէ չէ կարծեցեալ ստուգարանին, Հիւնքեարդ պէյէնտեանի սխալներուն պատասխանատուն՝ Հիւնքեարդ պէյէնտեան ի՞նքե՞ թէ չէ Յովհաննէսեան: Հա՛ դուք «Խ՛ կուզէք և ենթադրութիւններէն զատ Հիւնքեարդ պէյէնտեանի միւս յանցանքներն ալ երեւան հանենք, համբերեցէ՛ք քիչ մը, անոնց ալ կարգը կուգայ»:

Ափսո՛ս, Դ. Խ. արդեօք միշտ այսպէս կ'ապե՞նք ըսելով կը կոտորէք հէ՛... Եթէ Հիւնքեարդ պէյէնտեան կարենար ձայն բարձրացնել՝ պիտի աղաղակէր: «Աստուած, աղատէ զիս իմ բարեկամներէս, իմ թշնամիներէս ազատելու հոգը իմ վրաս կ'առնեմ»:

Ստուգարանութիւնը ստոյգ գիտութիւն մըն է. բնական, պատմական և իմաստասիրական օրէնքներու վրայ կը կռթնի, ինչու որ բառերն ալ զանոնք արտաբերող մարդոց պէս կը ծնին, կ'ապրին և կը մեռնին:

Լեզուին արմատը կազմող բառերու հնչմանց այլայլմունքը բնական օրէնքներով սահմանել, մէկ ազգէն միւսը եղած բառերու փոխառութիւնը պատմութեամբ լուսարանել, և բառերու արմատական պաշտօնին իմաստասիրական պատճառներով խանգարուիլը ուսումնասիրել, ահա ասոնց ամբողջութիւնն է ստուգարանութիւնը:

Ե՛ւ Ս. Խ. յիշաւի ստուգարանութիւնը բնական օրէնքներու կը կռթնի, վասնզի լեզու մը՝ զայն խօսող ժողովրդին բերնին մէջ՝ բերնին բնական կազմուածքին պատճառաւ միշտ կ'այլալի: Թոքերէն արտաշնչուած օդը հապաղին ազդեցութեամբ շրթունքներուն և ակոսայներուն հանդիպելով, և ռնգունքէն

անցնելով յատուկ ձեւեր կ'առնէ:

Վասն որոյ՝ լեզուի մը ձայնական գիտութիւնը մեզ կ'առաջնորդէ բաղաձայններու հոսանքին, ռնգային, շրնային և հոսանքային իրարմէ որոշել. ձայնաւորներու երկուք, սուր, երկամակը սահմանել. Դարձեալ գրերու հոսանքին, շրնային, ռնգային, յոսանքային և ռնգային օրէնքը փաստասիրել:

Ե՛րկրորդ. Ստուգարանութիւնը պատմական օրէնքներու կը կռթնի. Վասն զի դարերու ընթացքին մէջ մարդոց իրարու հետ ունեցած յարաբերութիւնը, ժողովրդոց ցեղակցութիւնը, զարգացեալ ցեղերու անուրանալի ազդեցութիւնը, քաղաքակրթութեան անփոփոխի և օգտակար գերակշռութիւնը մեզ կը սովորեցնեն թէ՛ աղբ մը ուրիշ ազգէ փոխ կ'առնէ իրեն պակասած բառերու մթերքը:

Վասն որոյ՝ լեզուի մը պատմական գիտութիւնը մեզ կ'առաջնորդէ օտար և բնիկ հեղինակներէ գոհացուցիչ փաստերով և պատմութեամբ լուսարանել լեզուին մէջ եղած փոխառութիւնները:

Ե՛րկրորդ. Ստուգարանութիւնը կը կռթնի իմաստասիրական օրէնքներու, վասնզի բառերու խանգարմունք որչափ ալ ի սկզբան ձայնական թուին չատ անգամ մարդուս իմացականութենէն կը բղխին, և զանոնք մօտէն ուսումնասիրողը տրամաբանեալ պատճառներու շարք մը կը տեսնէ անոնց մէջ, ինչու որ բերնին խանգարածը ուրիշ է, մոքի՛նը՝ ուրիշ:

Վասն որոյ՝ լեզուի մը իմաստասիրական գիտութիւնը մեզ կ'առաջնորդէ բառի մը նախնական իմաստէն ծանօթ հոգեբանական պատճառներով հեռանալ այն բառին առումներուն, փոխաբերական իմաստներուն անցնիլ. բառգիրքին սահմանէն ալ դուրս ելլել յանդուգն զեղջուռներուն ճարտասանական փակառումներուն մեկնութիւնը տալ, եւայլն, եւայլն:

Բայց ի՞նչ կրնանք խորհիլ գրքի մը

վրայ որ՝ անծանօթին կռթնելով անծանօթին հասնիլ կը փորձէ, որ մտացածին և անդոյ օրէնքներ կը յերիւրէ որ խիզճ չըներ իր կանխորոշ նպատակին հասնելու համար չիրական օրէնքներն ալ խեղաթիւրել:

Եւ ստուգիւ Հիւնքեարպէյէնտեանի դիւտերն են ասոնք՝ որ իր բեղմնաւոր մտքին վրայ զքանչացումնս կ'առթեն, բայց միանգամայն մեզ չեն արդիւր աւնոց կամայական ըլլալը հռչակելու, Հիւնքեարպէյէնտեան կ'ընդունի:

- Ա. էջ 190. — Օտար յատուկ անունները բնիկ հասարակ անուններու վերածել:  
 Բ. էջ 260 — Բառախաղ:  
 Գ. էջ 355 — Գրերու քմահաճ տեղափոխութիւն:  
 Դ. էջ 318 — Թելադրութիւն:  
 Ե. էջ 202 — Հակառակէն ծագում:

Հետզհետէ առնենք այս իր մէջ բերած ստուգաբանական օրէնքները և անոնց որչափ անտեղի ըլլալը պիտի տեսնենք. մանաւանդ պիտի ստուգենք շատ անգամ որ՝ մասնաւորէն ընդհանուրին օրէնք մը հանել փորձեր է, և պատահական երեւոյթէ մը խաբուեր է. հոս ալ կարծես ուրիշին խօսք չի թողելու համար ինքն է որ ինքզինքը մասնանիչ կ'ընէ:

Օրինակ. էջ 258. — Ութարիդ արաբերէն անունը օտարոտի բառին այնչափ մօտ է որ թէպէտեւ գիտենք թէ օտարոտի օտար բառին ածանցումն է, սակայն կը փորձուի մարդ ըսելու թէ նոյն Արարացին է ոչ միայն ձայնական մերձաւորութեան համար այլ և քանզի միշտ կուտայ անուանց յիշատակութեան առթիւ գործածուած կը տեսնենք:

Եւ ուստի այսչափը գիտնալէն ետքը կը զարմանանք թէ ինչո՞ւ փորձութիւն ունեցեր է ձայնական մերձաւորութիւնէն խաբուելու և օտար յատուկ անուն-

ները մեր հասարակ անուններէն հանելու:

Օրինակք

|        |          |         |                 |
|--------|----------|---------|-----------------|
| էջ 190 | Նեղէն    | կը հանէ | Նեղոս գետը      |
| » 100  | Յորդէն   | » »     | Յորդանան գետը   |
| » 12   | Դանդաղէն | » »     | Տանտաղոս անունը |
| » 258  | Յամիէն   | » »     | Հերմէս չատուած  |
| » 62   | Արտօսէն  | » »     | Արտասիւրաս      |
| » 19   | Յոպակէն  | » »     | Ժիւլէնալիս      |
| » 336  | Վիշապէն  | » »     | Վեսուֆ լեռը     |

Եւ Աստուած իմ, ի՞նչպիսի տարօրինակ փաստերով. կառնենք իր իսկ խօսքերը (էջ 388, Աշտ-բե-հր-աւ-Վիշապ հը է Վեսուֆ երբ ինք Բորբոտէ, և է հանդարտութեան Վիշապ հը անհաւանք խորո-թեան այսինքն, 115 Դեր. Հիւն կը տեսնենք թէ Վիշապ է՞նչ կը նշանակէ տեղադր. Սորո-բո-թեան բառերն, Տ. Յոյն. Ա. Քն. Հիւն-տեղադրութեան):

Ի՞նչ, մինչդեռ մեր լեզուին իսկական արժանիքը արեւու պէս կը փայլի, և քանի որ օտար լեզուաբաններ ալ շատ գովեստով կը խօսին մեր ճոխ լեզուին անսպառ հարստութեանը վրայ՝ կ'արժէ որ տղայական ենթադրութիւններով անոնց արհամարանքին ենթակայ ըլլանք:

Ո՞վ կ'ըսէ թէ Հրեայ, եգիպտացի, Հուովմայեցի, Յոյն, եւայլն խօսք մէկ ըրած ըլլան որ մեր հասարակ անուններուն վրայ ձեւեն իրենց յատուկ անունները, և այն ալ ինչպիսի փաստերով, որովհետեւ Վեսուֆ լեռան բերնէն մինչեւ յատակը 115 մետր խոր է եղեր, և երբ բորբոքի լավա և մոխիր դուրս կուտայ եղեր:

Սակայն ո՞վ կ'ըսէ թէ 115 մետր երկայնութեամբ վիշապ կայ աշխարհի վրայ և կամ երբ վիշապը բորբոքի Վեսուֆի նման բերնէն լավա և մոխիր դուրս կը փչէ. ինչ անհեթեթ նմանութիւն և ինչ այլանդակ ստուգաբանութիւն, ով որ այս օրինակ ստուգաբանութեան պաշտպանութիւնը կ'ըստանձնէ ճակատը անարժանաբար մենք կը չափենք:

## ՆԻԻԹԱՊԱՇՏԻ ԻՏԷԱԼՆԵՐ



## ԴՊՐՈՑԷ ՆԵՐՍ

Կենաց յարասեւ պայքարը կ'իշխէ բնազդօրէն մարդոց վրայ, կը յեղաշրջէ անոնց գաղափարները և կը մղէ մարդս նիւթամուլութեան, զերբուկ է անոր արահետը, բայց պիտի կոխես անցնիս, երբ դժգ. կը ներէ, եթէ տկար ես և փոքրոգի, նա քեզ պիտի կոխէ առաւել:

Դաստիարակութիւնը միայն չ'աւանդեր նիւթապաշտական գաղափարները դպրոցին մէջ, աշխարհ արդէն ընդարձակ դպրոց մ'է մարդկային ընկերութեան:

Սակայն դպրոցէն սկսածը աւելի աղետալի է և տարափոխիկ: Յայտնի է թէ ամենէն ուսեալ իմացականութիւնը, ամենէն ազէտ ուղեղին հետ համեմալիս են նիւթամուլութեան մէջ: Բայց ի՞նչ է նիւթապաշտին կեանքը, — ահա խնդիր մը որ ինքնին կարօտ չէ լուսաբանօրէն մեկնուելու —:

Նիւթապաշտին հոգին՝ նիւթն է, որուն շուրջը կը դառնայ ինք, ինչպէս մուրաշ մը արեգին ոլորտը մեքենապէս, այդ սահմանէն անդին չ'անցնիր, զի անեղբութիւն կը նշմարէ, կ'ուրանայ ինչ որ միտքն անկարող է ըմբռնել «Ինչո՞ւ հոգ ընեմ, կ'ուտեմ, կը խմեմ, կը նիրհեմ»: Միթէ այս չէ՞ նիւթապաշտին բնորոշ սկզբունքն ու դաւանանքը. — Կրօնքը և բարոյական սկզբունքը՝ բնազանցական վարդապետութիւններ կ'անուանէ, որոց դարաւանդներէ մագլցել չ'ախորժիր:

Մինչդեռ ճշմարիտ կրօնքն ու բարոյականը, որ իրարմէ անջատ չեն, մարդս ոչ հոգեմոլ և ոչ ալ նիւթամոլ կ'ընեն, այլ միջին ճամբայ մը կը գտնէ:

և այսպէս սահման կը դնեն մարդկային բարեկիրթ արժանապատուութեան վայելքն է սոսկ նիւթապաշտին նպատակը, որ անասնային է, բիրտ նիւթը միայն յագուրդ չ'տար, այլ դառն յափրանք մ'ալ կը բերէ իրեն հետ, որով մեծ բան մը պահատ է նիւթապաշտին գոյութեան մէջ, քանզի՝ նա իր հոգեւոյն մէջ կ'զգայ անհուն դատարկութիւն մը: Վարկենական է նիւթին վայելքն, կը գգուէ, կ'զբօսցունէ, հաճոյք մը՝ որ տեւական չէ և շատ անգամ կը փոխարինուի դառն յափրանքով: Բայց հոգեկան կեանքը թէեւ տառապանքի հետ ալ կապուած ըլլայ, անհուն բարութեան երջանկութիւնն ունի: Այդ բարութեան զգացումը միայն կրնայ գոհացունել հոգին, որ միշտ նիւթէն բարձր է:

Բարոյական կենաց տառապանքը թէեւ շատ անգամ լուին ու թաքուն, բայց աւելի տեւական է, այսու հանդերձ այդ տառապանաց մէջ ալ քաղցրութիւն մը կայ, երբ խիղճդ կ'զգայ թէ իր ամեն պարտքերը կատարած է, թէեւ ապեւրախութեան անհուն և անպատկառ ապացոյցներ կը կեղեքեն հոգիդ, սակայն ներքին, խորին ու վսեմ գոհունակութիւն մը, արդարութեան և բարութեան զգացմանց հետ միացած կը բարձրացունեն զքեզ՝ մարդոց և նիւթին գձձութիւններէն վեր:

Նիւթապաշտն առեւերելութապէս զըւարթ է, կայտառ և զրօտասէր, անհոգ է իր շուրջը կատարուած բարոյական յեղաշրջումներու և յառաջդիմութեան: Նա միայն կը պահանջէ նիւթին զարգացումը, զի անոր փայլը միայն կը շլացունէ իր աչքն ու միտքը:

«Նիւթ ամեն ինչ, անկէ անդին ոչինչ»: և ո՞րքան նիւթապաշտներ ունինք հիմա, դպրոցական նոր Պլան-պէ՛ մը յանկարծ դէմք կ'ենէ, ճիւղն ու ճապուկ ձեւերով կը հմայէ զքեզ, լեզուանի է լեզուանի, ամեն նիւթի վրայ կը ճա-

ռէ, հեշտօրէն, կրօնք, իմաստասիրութիւն, ասոնք խնդիրներ են միթէ, իմաստասիրութեան վերնագաւառները կը սլանայ մտովին, եթէ կրնաս բռնէ յանձնապատասան անմիտ փայլունք։ Այս երեւոյթը մեր մէջ մեղադրելի և տարօրինակ պէտք չէ համարիլ, վասն զի դրպրոցական նորելուկ, ազատախոհ տնօրէն ուսուցիչներ ալ ունինք, որոնք դատարարութեան մէկ ճիւղը նաեւ համարած են սիրաբանել ուսուցանել հեշտասէր եղանակներով, և այսպէս օտար, մոյի և մեղձ գրականութեան նմոյշներ ընծայելով արտակերպ կենաց դուռ մը կը բանան մեզ նորածին և բազմաբոյր ախորժակներու վէջէն...

Եթէ ուսուցիչը այսպէս է, ի՞նչ կ'ընէ ուրեմն աշակերտը...

«Քիչ մը հակասական անհեթեթ չէ՞ արդեօք, որսը ձգել և շուրին ետեւէն վազել, անկեալ վարժապետներ մութին մէջ մատնանիշ ընել... Անկեալը այն է՝ որ բարոյական չունի և անմեղներու անուններն արատաւորելով կը սնան»։

Ո՛րքան նախանձախնդիրներ ունինք մեր բարուց վերաշինութեան համար, որքան բարոյագէտներ մեր գլխուն վերել, Աստուած իմ, ասոնք վաղը հզօր ընկերաբաններ ալ պիտի ըլլան<sup>(\*)</sup>, մարդկային հին գրութիւններ ի հիմանց պիտի տապալեն վեր ու վար. և նոր լոյսեր պիտի սփռեն ընկերային ամենամթն խաւերու մէջ, Հիֆթա հանելուկը պիտի լուծեն և ուղղակի միջոցին պիտի դիմեն առանց սայթաքելու։

Այս ալ նիւթական յառաջդիմութեան մէկ տեսակը չէ՞, պատիւ, ուրեմն, անոր որ այս գաղափարները սերունդէ սերունդ պիտի փոխանցէ, որուն շնորհիւ մէկ քառորդ դարէ վերջ՝ վտիտ և ճշգիւ սերունդի մը դէմ պիտի գլուխուիք, որ ո՛չ հոգի է և ոչ մարմին այլ թերեւս ուրուական...

Գաթր-գիւղ

ԴԻՏՈՂՆ

## ՓՐՁԻ ՁԲՈՍԱՆՔՆԵՐ



### ՄԱՅՐԸ

Վաթսուն տարիներ անցուցած է Անթառամ հանրմը, և մայր է 4 զաւակներու՝ որոնց ջը ազջիկ են և ջը մանչ։

Աշխատած ու չարչարուած է տարիներով, թէքէին տակը մաշեցուցած է իր կեանքը և սիրտը թունդ կ'ելլէ եթէ լսէ որ ինչպէս ւակներէն մէկը հիւանդ է։

Բայց իր զաւակները բոլորովին անտարբեր են իրեն նկատմամբ, ամենքն ալ զինքը ծնած ցատրի մը տեղ դրած են։

Հէգ կինը երբ բան մը խօսի, կամ գիտողութիւն մը բնէ, անմիջապէս խօսքը կը կտրեն երեսն ի վեր պոռալով «Դուն սուս եղիր ծնած ցատր»։ [Սակայն ան մայր է իր սիրտը կայունի, անոնց հանդէպ և կը լռէ հէք կնիկը։

Իր երկու մանչերն ալ կարեւոր վաճառատուներու մէջ գրագիր են, ամիսը 10—12 ոսկի կ'առնեն և Միւլէն պատրաստուած հագուստներ կը հագնին։

Կիրակի օրերը կառքով պտոյտ կ'ընեն Բերայի մէջ. և Լիւքսեմպուրի կը նստին։

Բարեկամական տեսակցութիւններու մէջ Հայերէն չեն խօսիր, և ֆրանսերէնը կը նախընտրեն։

Իրիկուան դէմ շիտակ ճամբան կը ստտին և գաղղիերէն քօռթէ կընեն։

Իրենց ամենէն աւելի գործածական պարբերութիւնն է ժը վու զէմ։

Սըւլք սըւլք կը պտըտկին փողոցները, և անոր ասոր աղջկան սիրային խօսքեր կ'ուղղեն, ատ իրենց համար բաս-դան է (ժամանց)։

Իրենց իտէալն է հաղար տսիիով աղջիկ։ Կրպաննուն վիճակը. — Երկուշաբթի առտու 10 փարսց կայ միայն... կամուրջէն անցնելու համար։

Իրենց արտաքին վիճակը. — Շիք... ծայրայեղօրէն չիք։

Բարոյական. — Բացակայ։

Ներքին վիճակ. — Զրկայ։

Առողջական վիճակ. — խանգարուած, չէք հաւատար, նայեցէք իրենց գրպանը, հապի տուփ կը գտնէք:

Իսկ գալով աղջիկներուն. Օ' անոնք գիտնական են և ուսեալ, ոչ ոքի կը հաւնին:

— Ո՞վ է իրենց մայրը, ինչ կարեւորութիւն ունի որ, տգէտ կնիկ մ'է:

Իրենք շատ բան գիտեն, ուսմունք տեսած են, դպրոց գացած են, միշտ վերերն է իրենց գաղափարը, վար չեն կրնար նայիլ:

Օր մը երկու քոյրերը կը խօսակցէին, երբ մեծը ըսաւ իր պզտիկ քրոջ.

— Քոյր իմ, մեզի պէս սիրուն, ուսեալ, ազնիւ ուրիշ աղջիկ չեմ տեսնէր կոր շուրջս:

Այսքան առաւելութիւնները ունենալով հանդերձ... տունը մնացած են փառացած, փառացած:

Իտէալ. — Հարուստ էրիկ մը,

Արժանիք. — Իրենց չըջագգեստները, ձեռնոցները, գլխարկները այլովքն հանգերձ:

Բարոյական. — Այդ անունով նիւթ կամ էակ չեն ճանչնար:

Տնտեսական. — Աճէմ հաքիքճիին պարտք:

Այդ փափաքին խենթի մը պէս... փառաւոր և պերճ կեանքին:

Տունի խոհանոցի գործերը իրենց մայրը կ'ընէ, իրենք չեն կրնար ընել, իրենց կը վայլէ՞ մի...:

Եւ բնական է որ Անթառամ հանրմին տան մէջ չնհորք ալ չի կայ, խեղճ կինը մինչեւ իրիկուն պատն երեսին նստած է, և երբ գիշերները զաւակները գան, անոնք ալ տունը չեն նստիր:

Այսպէս պէտք է ըլլայ, ի՞նչու չը յարգենք մեր մայրերը, ի՞նչու մեր մէջ ընտանեկան խաղաղիկ կեանքը գոյութիւն չունենայ, փոխանակ մեծ մեծ վերացական գաղափարներու ողջամիտ սկզբունքներ ունենանք աւելի լաւ չըլլար:

Սիրենք ու յարգենք մեր մայրերը, կեանքի մէջ մօր մը գգուանքէն անուշ բան կայ մի՞թէ:

Վ. Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

ՏԵՐՍՈՒՄ



## ՄՆՁՈՒՐ ԼԵՌԸ ԿԱՄ ՕՎԱՋԵԳԻ ԴԱՇՏԸ

Մնձուր լերան հարաւային ստորոտը, ընդարձակ լեռնադաշտ մ'է Օվաճրգ. հիւսիսէն հարաւ 4 ժամ լայնութիւն և արեւելքէն արեւմուտը 12 ժամ երկայնութիւն ունի: Արեւմտակողմն 12 ժամ հեռու Ակն քաղաքը, հինսիսակողմն 4 ժամ Բեմախ, հիւսարեւալակողմն 14 ժամ Երզնկայ, արեւելակողմն 12 ժամ Գուգուջան աւանը, Տուժինք կամ Կալան լեռը, հարաւակողմն 10 ժամ Խօզաթ (երբեմն վիլայէթ իսկ այժմ մուծասարըֆութիւն է), և Չկչիածագ:

Մոյն դաշտի արեւմտակողմը Խաղաջուր արօտավայրի կամ Պարանձոր գիւղախմբի «Տէվէ պոյնի»-ի հովիտներէ հաւաքմամբ՝ միացեալ ջրերու գետակ մը կ'ընթանայ դաշտին հարաւակողմի անտառաբլուրներու ստորոտէն և կը կոչուի Խաղաջուր սուլի. իսկ հիւսիսակողմը, Մնձուր լերան ստորոտի Գիւմընէն կը բղխի Մնձուր գետակը՝ այնպիսի գոռուժով որ սաստիկ սրտուճմներէ չը տարբերիր, հետեւաբար իւր ջուրն ամառը այնքան պաղ է որ սառի կամ ձիւնի հետ չենք կրնար բաղդատել և այնքան մաքուր ու զտեալ որ երկու մեթր խորունկութեամբ՝ իւր յատակը ասեղ մը ձգուի, դուրսէն դիտող մը կարող է տեսնել: Սորա բղիժած տեղւոյն, տեղացիք զիյարէթ անունը կուտան, ինչպէս նաեւ մօտիկն ունի համանուն գիւղակ մը: Տեղացի քիւրտեր աւանդաբար իրենց հասած կամ սրնոյն է Սէյիտներէ պատմուած ու հաւատքն ունին թէ՛ ժամանակաւ Մնձուր անուն Սէյիտ մը ճամբորդութեան ատեն հոս հասած ու խիստ ծարաւացած ըլլալուն, ոտքերը գետնին քսած ու հրաշքով այս ջուրը բղիժեցուցած է եւայլն: Ինչ որ ալ ըլլայ վերջապէս այս ջուրը տարին երկու տեսակ գոյներով կը բղխի. Գարնան՝ Մարա ամսոյ սկիզբէն մինչեւ Ապրիլ 10, որ է 40 օր ճերմակ կաթնագոյն, և ասոր համար դարձեալ տեղացիք կ'ըսեն թէ՛ անտառներու դիցուհին իւր եղնիկ կամ եղ-

ջերութեան հետքերը հոս բերելով կը կթէ ու կաթը կը խառնէ ջրին հետ. բայց ինչո՞ւ, ո՞չ ոք գիտէ:

Սոյն գետակի մէջ չափազանց ու միատեսակ ձուկեր կան (ալա պարզոր) որք խառնուածիկ են, ու բերանի վերին և ստորին շրթներուն ներքնակողմը փշակուայններ ունին. ողնաշարի ու կողի ոսկորներէն պատ ո՞ւրէ փշակը չունին. շատ համեղ են: Այս տեսակ ձուկեր ընդհանրապէս, կարճատես և փափկաճաշակ ըլլալուն համար միշտ մաքուր ջրերու մէջ կ'ապրին ու կ'աճին:

Անգամ մը երբ տեղւոյն կառավարական պաշտօնէութեանց հետ ուսկանաւ ձուկ որսալու գացինք, բազմաթիւ ձուկերու վրայ կը նետուէր ուսկանը, և բոլորովին պտրապ դուրս կուգար ու կ'ափշեցունէր զմեզ զարմանքով: Նոյն միջոցին նախիր մը կ'անցնէր գետակէն առնուած առուի մը ջրէն. և ահա առուն ճեղքուելով ջուրը յորդեց դէպ ի գետ՝ բերելով իւր հետ պղտոր հոսանք մը, յորմէ գետակի ջուրն ալ փոքր ինչ պղտորեցաւ: Մենք կը շարունակէինք առանց ուշ դնելու պատահածին. հրա՛ջք, ուսկանի ծանրութիւնը հազիւ կարողացանք դուրս հանել, որ լի էր ձկներով. գաղտնիքը հասկըցած էինք. ոստիկանները փութով գինուեցան՝ թիւերով ու փետուրներով, հոյ փութել ու ջուրը թափել, ահա այս էր պաշտօնին, ու այս միջոցաւ քանի մը ուսկանաւ ձուկ բռնեցինք յետուն օխոյի չափ, մտքերնիս բերելով այն առածը թէ «պղտոր ջրին մէջ կ'որսացուի ձուկը»:

Ինչպէս Խաղաղութիւն գետակը դաշտին հարաւակողմէն կ'ընթանայ, այնպէս ալ Մեծուրի գետակը հիւսիսակողմէն և ստորոջ գաշտը կ'ոռոգուի այս գետակներու ջրերով. ասանցմէ զատ կան բազմաթիւ աղբիւրներ ու ջրառատ առուներ որք բնութեան միակ պարգեւներն են դաշտին մէջ:

Տեղացիք սակայն ամբողջովին քիւրտ ըլլալով մշակելու և շահագործելու համամիտ չեն բնաւ. ծոյլ չեն, մանաւանդ որ Սէյիտներու, պէյերու կամ ցեղապետներու կը պատկանի, չէ թէ միայն այն դաշտը՝ քչլ ամրողջ լեռը:

Ալիւրը շաղուելէ յետոյ նշան մը կ'ընեն վրան, ըորպէս ցի թէ աճեկուն ըլլայ և թէ

մենէ աղէկները չի գողնան զայն, ինչպէս նաեւ մանուկը օրօրան դնելու, եւ այլ շատ մը պարագայներու ատեն այլ և այլ նշաններ կ'ընեն:

Ինքնաբոյս ծառ մը կտրել, կամ անկէ ճիւղ մը կրակը նետել շատ մեծ վեղք է, արդէն իրենք չեն ըներ, և եթէ օտար մը անգիտօրար մեղանչէ կամ կը ծեծեն՝ և կամ կը փախցունեն, եթէ հասարակ մէկն է. և կը յանդիմանեն ու կը խրատեն, եթէ նշանաւոր ու ծանօթ է: Սոցա՛ պաշտօնական երգումը Ալիի թուրին կամ իրենց ցեղապետին գլխուն վրայ կըլլայ:

Առաւօտները արեգակին դալուստը խոնարհաբար կ'ողջունեն. ճամբայներու վրայ կամ դուրս, միակտոր մեծ քարերը, հոծ բուսած խիտ կաղնիի ծառեր կամ ծղօտներ սրբատեղին են:

Տարւոյն երկրորդ մասին (Գասըմ) առաջին օրը մեծ հանդէսներ կը կատարեն դոհերով ու զուարակներով, մօտերին գտնուած ուխտատեղիները կ'երթան կուտեն, կը խլամեն, հարս, աղջիկ, երիտասարդ, հողայ պար կը բռնեն, խաղեր կը կանչեն, փող, թմբուկ, սրինգ, և այլ նուակներով կը խախտանան:

Օվածքի կողմի ստորին Մեծուր լեռան կատարը հասնելու համար  $2\frac{1}{2}$  ժամու վերելք ունի, բոլորովին մերկ է ամրողջ լեռը, սակայն գոյնզգոյն ծաղիկներով բազմապատկ խոտերով ու թուփերով կը պնուի: Գարնան, այսինքն Ապրիլի 15էն Ռինչեւ Հոկտեմբեր չը զրկուի իւր սեփական գարդարանքներէն: Սորա գագաթը կը բոցնի խոտ մը որ գետնէն մէկ մեթր կը բարձրանայ խիտ ու ընդարձակ ճիւղեր արձակելով: Տեղացիք չաշուր անունը կուտան այս խոտին. դուարաց համար օգտակար ու սննդարար ըլլալուն, ձմեռուան կեր ըլլալու համար իւրաքանչիւր տուն պատրաստ է ժամանակին կրթալ, ժողվել ու շիգել լեռան դաշտի կողմի բարձանքը վրայ, և երբ ձմեռը հասնի, ձիւնը լաւ մը գետինը ծածկէ ու խորտուրորդ տեղերը հաւասարեցնէ, և երբ հարաւի հովէ մը կամ արեգակի ջերմութենէ յետոյ հիւսիսային քամին փչելով ձիւնին ետքսը սառեցնէ, այն ատեն իրենց բալխիւրածեւ անանիւ սայլակը որ Թեյիկ անունը

կուտան, կը տանին այն խարարարդերու մօտ ու վրան հինդ ձիու տարողութեամբ չաշուր կը լեցնեն, և լաւ մը կապտելէ վերջ կառք վարելու պէս ետեւի կողմը մէկը կայնած, չոգեկառքի մը նման աներեւոյթ կըլլայ այն զառիվայրէն. այլ եւս դաշտն է, գրեթէ իւր տանը դուռը:

(Շարունակելի)

ՍԱՐԳԻՍ Յ. ՊՕՂԻԿԵԱՆ

## ՊԱՐՏԻՉՊԱՆԱԿԱՆ



### Պատուաս (աշը)

Քիչ մ'ալ ծառերով զբաղինք. բայց այս անգամ միայն պատուաստի վրայ պիտի խօսիմ ձեզ, որով կը հետաքրքրուիք անշուշտ. և մենք՝ նպատակ ունենալով Եւրոպական ընտրելագոյն գրութիւնները ընդհանրացնել մեր մէջ, կը յուսամ որ օգտակար և կարեւոր ճիւղ մը ձեռք առած ըլլամ:

Պատուաստը ինչպէս գիտէք, գործողութիւն մ'է. որով բոյսի մը կենդանի մէկ մասը առնելով, կը միացնեն ուրիշ բոյսի մը. առաջինը կը կոչեն պատուաս (Greffon գալէմ), իսկ երկրորդը ենթակայ կամ վայրի (Sujet Sauvageon, եսպանի). Ծառը երբ մշակուած է և պատուաստել կ'ուզեմք, որոշելու համար Ենթակայ անունը կուտանք անոր, և պատուաստելի ինքնաբոյս կամ անմշակ տունկերուն ալ վայրի անունը:

Գիտնականներ փորձով հաստատած են որ, ծառերու ծիւերը (ճիւղերու վրայ նոր երեւցած աչքերը) կրնան բարեփոխել օտար արմատներէ իրեն ջամբուած հիւթը, և զայն յարմարցնել իրենց զարգացումին:

Պատուասը կրնայ ուրեմն ապրիլ օնէէ ենթակայի մը վրայ, երբ անոր ծայրատուած երակներու մասը — որոնք սահմանուած են արմատներու հիւթալիւր հեղուկները տերեւներուն տանիլ — պատրուսի ծայրատուած հիւթալիւր երակներու մասին հետ անմիջական հաղորդակցութեան դրուի, և այս երակներու բացուածքներն ալ մէկգմէկու վրայ պատշաճապէս վերադրուած ըլլալով,

ենթակային սնուցիչ հիւթերը կարենան պատրուսի երակներուն մէջ մտնել առանց արգելքի. որ այն ատեն պատրուսի ծիւերն ալ իրենց առաջին տերեւները պիտի արձակեն, որոնք՝ ենթակայէն գէպ իրենց ջամբուած հիւթեղ հեղանուտը կատարելագործելով, պիտի կազմաշրջեն զայն բուսային մասացի՝ (Cambium) կամ բուսամագի, ուրիշ յառաջ պիտի գտն իւրաքանչիւր տերեւին տակը թէ փայտային և թէ կեղեւային վար իջնող երակներ. որ պատրուսէն ենթակային կ'անցնին, կեղեւին և թերափայտին (Aubier) մէջ գտնուած խոնաւ ճամպաներուն հետեւելով. վերջապէս՝ բուսամագի մէկ մասը իր վայրագնաց շարժման մէջ, գործարանաւոր նիւթերու միջեր մը պիտի թողու վէրքին եզերքները զօգելու համար, որով և պատուաստի գործողութիւնը յաջողութեամբ լրացած կըլլայ:

Ըսել է՝ գործնականի մէջ կատարելապէս յաջողելու համար, գլխաւորապէս ուշադրութիւն ընելու ենք որ, ենթակային հիւթեղ երակները ճշգրտիւ պատշաճին պատրուսի միեւնոյն տեսակէ երակներուն վրայ, Եւ որովհետեւ այս երակները տարածուած են թերափայտի (ճերմակ փայտ, որ կախուղ կ'ըլլայ և ծառին կեղեւին կը յաջօրգէ, ուրիշ վերջը կուգայ կատարելագործեալ կարծր փայտը, որ ծառին սրտին մօտ կը գտնուի) խաւերուն մէջ, և աւելի փառելի (Liber) թերափայտի ամենէն մատաղ խաւը, որ կը գտնուի կեղեւին և անմիջապէս թերափայտին մէջտեղը, բարակ թուղթի նման, (որ կեղեւին պէս կախուղ և թուլակազմ է) խաւերուն մէջ, կը բաւէ այդ յաջողութիւնը ձեռք բերելու համար, ենթակային և պատրուսին վերոյիշեալ խաւերը իրարու լաւ պատկանեցնել:

Սակայն ուրիշ նկատողութեան առնելիք գլխաւոր պարագայ մ'ալ կայ, որ պատուաստի յաջողութեան էական պայմաններէն մին է. այսինքն՝ պէտք է պատրուսին և ենթակային մէջ զգալի նմանողութիւն գտնուի. և այս պատճառաւ կարելի չէ տարբեր սեռի և ազգի տեսակները իրարու պատուաստել, ինձորենիի բոլոր տեսակները կրնաք իրարու պատուաստել. ինչպէս և սալորենիի, դեղձիի, տանձենիի տեսակները եւայլն. և

պահապարակ իրենց բուսաբանական յատկանիշերով իրարու շատ նմանող բոլոր տունկերը իրարու : Այսպէս կարեւի չէ եղբեւանին (էյլսք) պատուաւորել կնճիի (գարա աղաճ) վրայ, ինչպէս և կաղնին (մէշէ) նըղարենի (կիւրկէն) վրայ : և կամ ինչպէս երբեմն կը կարծէին, կանաչ վարդեր հասցընելու համար վարդենին չիշխանի (տիքէնի տէֆնէ) վրայ : կամ ինչպէս Գօլիւմէլ իսկ կը յանձնարարէր սեւ հաղարջի վրայ (սեւ գլմավուլա), սեւ վարդ արտադրելու համար :

Եւ արդէն միմիայն իրենց բուսաբանական յատկանիշերու մերձաւորութիւնը չի բաւեր յաջողութիւն գտնելու համար, այլ քէտքէ նաեւ որ՝ անոնց աճելու եղանակը նման ըլլայ, և մասնաւորապէս ալ իրենց բուսականութիւնը միեւնոյն ժամանակին կատարուի : և այս մասին տարրերութիւնը որչափ շատ ըլլայ, պատուաւոր յաջողութիւնն տլ այնչափ կատարածելի կ'ըլլայ : Թէեւ պատուրուսը միշտ չի չորնար : բայց և այնպէս անկա նուազուն և վատոյժ կը մնայ :

Այսպէս ուրեմն, երբ կ'ուզէք խնձորենիի և տանձենիի տեսակներ իրարու պատուաւորել, պէտք է նախապէս լաւ ուսումնասիրել վայրիին և պատուաւոր բուսականութեան ժամանակը, որպէս զի՝ յամրահաս (ուշ հասնող) տեսակ մը կանխահասի վրայ, և կամ որ նոյնն է, կանխահասը յամրահասին վրայ չի պատուաւորէ, ինչպէս կ'ընեն ոմանք շատ անգամներ առանց գիտնալու :

Պատուաւոր օգտակարութիւնը. — Պատուաւոր կ'ազնուացնէ պտուղին տեսակը, և անոր հասուննալու ժամանակը կը փութացընէ : Ահաւասիկ թէ ինչպէս : Վայրիին վրայ պատուաւոր զօղուելէն յառաջ կուգայ թերափայտին և կեղեւին մէջ գոյացած երակներու ուղղութեան անկարգութիւն մը, այնպէս որ՝ արմատներէն դէպ ի տերեւները բարձրացող սննդարար հիւթը, ճիւղին այդ զօղուած մասէն դժուարութեամբ անցնելով, շատ կամաց և քիչ քանակութեամբ կը հասնի պատուաւորին : և այս պատճառաւ պտուղներու լջիջներուն մէջ աւելի կատարեւագործեալ վիճակ մը ստանալով, պտուղները աւելի համեղ կ'ըլլան և շուտ կը հասունան :

Թէ պատուաւոր ծառերուն պտղաբերութիւնը կը փութացնէ, ուրկէ կը շահիք քանի մը տարիներ : Այս ալ միեւնոյն պատճառին արգասիքն է : որովհետեւ՝ սննդարար հիւթը պատուաւոր մէջ աւելի յամրարար շրջան առնելով, հոն աւելի կատարեալ պատրաստութիւն մը կ'ստանայ, որով ծաղիկ և պտուղ արտադրելու ալ, աւելի յամրութիւն մը կ'ստանայ : Պատուաւոր այս երկրորդ առաւելութիւնը մեծ կարեւորութիւն ունի, և շատ օգտակար իսկ մէկ քանի պարագաներու մէջ :

Այսպէս՝ տնկարանի մը (ֆիտուրը) մէջ ցանուած միգատու մատաղ տունկի մը ո՞ր ատրիճան գնահատելի ըլլալը հասկնալու համար, պէտք է սպասել 10—12 ամիս : մինչդեռ այդ մատաղ տունկէն ճիւղ մը կտրելով, եթէ հին ծառի մը վրայ պատուաւորուի, 4 առ առաւելն 5 տարիէն անոր տեսակը և յատկութիւնները կը ճանչցուի : Վերջապէս պատուաւոր շնորհիւ կարելի է մշակել ծառ մը այնպիսի հողերու մէջ, որ երբեք չի պիտի յաջողէր եթէ զայն ուղղակի կերպով տնկած ըլլայինք :

Սակայն չի մոռնանք պատուաւոր այս առաւելութիւններուն հետ մէկտեղ իր անպատեհութիւններն ալ նշանակել : Պատուաւորած տունկ մը աւելի սովաւակեաց (քիչ ապրող) կ'ըլլայ, քան ինքնարոյս կամ վայրի տունկը, միեւնոյն պարագաներու ազդեցութեանց տակ : Այս անպատեհութեան պատճառը կը կարծուի թէ, սննդարար հիւթին արմատներէն դէպ ի տերեւները, և անոնցմէ ալ դէպ ի արմատները կատարած շրջանաւորութեան դժուարութենէն յառաջ գայ : Տեսած էք անշուշտ որ, շատ մը պատուաւորած ծառերու զօղուած (խայնամիշ եղած) տեղը խոշոր ուռեցք մը կը կազմուի : այս ուռեցքը յառաջ կուգայ վար իջնող երակներու և բուսամացի այդ մասին վրայ կուտակուելէն, ուրկէ՝ ինչպէս ըսինք, շատ դժուարութեամբ կ'անցնին :

(Շարունակելի)

Լ. ԲՈՒՏ

## ՖԻԼՕՍՖԵՐԱՅԻ ՀԱՄԱՐ

Պատասխան թիւ 10, տոմար V, հ. V.

Տարակոյս չի կայ որ վրայ որթերը աւելի կը դիմանան որթալուծի (Ֆիլօքսերա) աւերումներուն, մանաւանդ երբ տունկը զօրաւոր ըլլայ. ամենէն աւելի ֆիլօքսերայէն վախցող որթերը, ծերացածներն են. եթէ այն հողերը որ անյիշատակ տարիներէ ի վեր այգի ըլլալ դատապարտուած են, իրենց բաղադրութեան մէջ կիր բնաւ կամ քիչ կը գտնուի, բոլորովին կաւային կազմուած մ'ունին, ուր բուսած տունկերը խոնաւութենէ կը նեղուին, որթատունկը միշտ կը վախճայ ֆիլօքսերայէ. նախ՝ որովհետեւ հիւանդութիւնները և մակարոյծերը աւելի տկար անհատներուն վրայ ուժգնապէս կը ներգործեն, քան առողջներուն, ըլլայ բուսային կամ կենդանի. երկրորդ՝ երկար ատեններ երբ ունէ տունկ միեւնոյն հողին վրայ կ'ապրի, այս վերջինը կը տկարանայ, և դժուարաւ կը սնուցանէ իր ծոցը թաղուած տունկը, և երբ ունէ տունկ շատ երկար տարիներ հողի մը վրայ կանցունէ իր կեանքը, այդ հողը անոր արտադրած աղբերով կը յագեցնայ. արդ՝ և ոչ մէկ բոյս կամ կենդանի չի փափաքիր իր աղբով սնանիլ, բայց երբ անոր ուրիշ մը յաջորդէ բոլորովին տարբեր տեսակէ և տարբեր յատկութիւններով, այս վերջինը հաճութեամբ կը տեղաւորի հոն և յաջողութեամբ կը բազմանայ. Անտառներու մէջ անգամ բնութեան այս զօրաւոր կամքը կը տիրապետէ. դարաւոր անտառներ կաղնիներով զարդարուած, երբ ունէ պատճառաւ այրած ոչնչացած են, զարմանօք դիտուած է որ ժամանակ մը վերջը փոխանակ կաղնիի՝ նշդարենիներ բուսած և ունածած են հոն, և այսպէս ուրիշ շատ օրինակներ կը հանդիպին շարունակ դիտողներու աչքին:

Երկարակեաց ծառ մը երբ իր արմատին վրայ կը չորնայ, մի փորձէք այլ եւս անոր տեղ ուրիշ մը տնկել միեւնոյն տեսակէն. Առոյտի դաշտ մը երկար տարիներ արտադրելէն վերջը, ինքնին կամաց կամաց կանհատի և իր տեղը կը գրաւեն տարբեր տունկեր. և երբ փորձէք կրկին անգամ վերա-

տնկել ձեր առուտանոցը՝ չը պիտի յաջողիք. այլ պէտք էք սպասել առնուաղն այնչափ տարիներ, որչափ սպրած է ձեր առոյտը այդ հողին մէջ. Մշակեցէք անոր տեղ տարբեր տունկ մը, ձեր աշխատութիւնը առատապէս պիտի վարձատրուի. Այսպէս նաեւ՝ երբ արտի մը մէջ ամեն տարի գարի ցանէք կամ ցորեն եւայլն մշակէք, հետզհետէ նուազ հասոյթ կ'ստանաք. և այս պատճառաւ է որ, երբ տունկ մը հողի մը վրայ իր շրջանը կատարէ, պէտք է անոր փոխանորդէ ուրիշ մը. բնական օրէնք մ'է այս, որ անտառներէն սկսեալ մինչեւ պարտկաներու խտերագ մշակութեանց մէջ անգամ ազդեալապէս կը ներգործէ:

Որթատունկը թէեւ ամեն տեսակ հողի կը համակերպի, բայց իր ամենէն աւելի սիրածը կրային կամ կիր պարունակող հողերու տեսակն է:

Բայց ի ջրասուն տունկերէ, ուրիշ ունէ տունկ երկարատեւ խոնաւութենէ չ'ախորժիր. թէեւ ֆիլօքսերայի հոմար յանձնարարուած է այգին ամբողջ ձմեռ ողողել ջրով, բայց ոչ ոք կրնայ վստահաբար հաստատել, թէ այդ միջոցով ֆիլօքսերան կ'ոչնչանայ. և եթէ ուզենք վարկեան մ'ալ հաւատալ թէ այգիներու ջրով ողողումը ֆիլօքսերայի դէմ զօրաւոր միջոց մ'է, նորէն սկզբամբ յանձնարարելի չէ, որովհետեւ անձրեւէն փախած ատեննիդ կարկուտին պիտի բռնուիք թերեւս. նախ ինչ որ ալ ըլլայ ողողելու եղանակը, անշուշտ ծախք մը առաջ պիտի գայ. երկրորդ խոնաւութեան մէջ որթատունկի մանր արմատները պիտի փոխին, և կարգ մը հիւանդութիւններէ զատ բուսաւիշի տկարացում և հետեւաբար անգործութիւն առաջ պիտի գայ. այն ատեն վստահ եղիք որ, ձեր որթատունկերը ամենէն աւելի և ամեն ժամանակէ աւելի շուտ պիտի վարակուին նախ օխտիով (քիւլիմէ) և յետոյ միլտիու է. Այս կերպով միայն սա ըրած պիտի ըլլաք որ, եթէ ֆիլօքսերայէն 3—4 տարուան մէջ ձեր այգին պիտի ոչնչանար, հիմա 2—3 տարի աւելի ուշ տեղի պիտի ունենայ այդ ոչնչացումը շարք մը ծախքերու ենթարկելով սակայն ձեզ:

Շատ խօսուեցաւ և շատ գրուեցաւ այս

տոմարի փորձանքին առաջը առնելու համար, բայց դժբաղդաբար մինչև ցարդ առաջարկուած և ոչ մէկ միջոց ազդեալուէս արդիւնաւոր եղած չէ։ Շատ մը քիմիական բաղադրութիւններ առաջարկուեցան, բայց ամենուն ալ ազդեցութիւնը ապարդիւն եղաւ, աւելի այդ միջոցներով այգիները ոչնչացուցին քան ֆիլօքսերան։ Ասոնց մէջէն մինչև ցարդ միմիայն սիւլֆիւր տը քառասուն ըսուած բաղադրութիւնը գոհացուցիչ արդիւնք տուած է, և բոլոր լուրջ վարպետներու ուշադրութիւնը անոր վրայ կեդրոնացած է։

Քիմիական բաղադրութիւններէն վերջ Ամերիկեան որթատունկերը մեծ հոչակ հանեցին, և վստահաբար խօսեցան թէ ֆիլօքսերան անկարող է այդ տունկերուն վրայ իր շահատակութիւնները կատարելու։ Բայց միշտ արդիւնքը գոհացուցիչ եղած չէ սպասուածին չափ, և հետեւաբար խնդիրը ասով ալ միշտ իր անլուծելիութեան մէջ կը մնայ։

Ամերիկեան որթատունկերը մերիններէն տարբեր պայմաններու տակ՝ յաջողութեամբ կրնան մշակուիլ, և ամեն տեսակ հողերու ալ չեն յարմարիր, առհասարակ անոնց համար պէտք է ըլլայ հողը արգասաբեր, առանց խոնաւութեան զով, շատ խորունկ հերկուած, առատապէս աղբուած և առանց կիրի։ այս վերջինին մէջ հիւանդանալով, շուտով կ'ոչնչանան։

Ամենէն աւելի յանձնարարուած Ամերիկեան որթատունկի տեսակներն են, Ռիքառիա, որ կը դիմադրէ գոհացուցիչ կերպով ֆիլօքսեալին, բայց կը յաջողի մասնաւորապէս արգաւանդ և երկաթային հողերու մէջ, կրային և քարուտ հողերու մէջ կանաչախտութենէ կը բռնուի և քիչ ժամանակուան մէջ կ'ոչնչանայ։

Ժագէ, ամենէն աւելի միլիթուէն կը վախնայ, բայց միջակ հողերու համար աղէկ կը յարմարի։

Ռիւբէսթուիս, կրային հողերու երբեք չի յարմարիր։

Սոնք-մատէյուս, ծանծաղ և միջակ հողերու մէջ կանաչախտութենէ կը վարակուի։

Վիալա, խորունկ, զով և արգաւանդ հո-

ղերու մէջ լաւ արդիւնք կուտայ, բայց կըրային հողերու մէջ չի յաջողիր։

Սօլօնիս, Ամերիկեան որթատունկերու մէջ միմիայն այս տեսակն է որ կրային հողերու մէջ կը յաջողի։

Վերոյիշեալ անցողակի տեսութենէն կը հետեւի որ, Ժագէն ծանծաղ և միջակ հողերու և սօլօնիսն ալ միմիայն կրային հողերու մէջ կը յարմարին, մնացեալ բոլոր տեսակներն ալ կը յաջողին արգասաբեր, զով և խորունկ հողերու մէջ, ուր կիր չի գտնուիր։

Իրենց անպատեհութիւններով հանդերձ կը յանձնարարուի միշտ փորձել Ամերիկեան որթատունկերը յարմարագոյն հողերու մէջ։ Բայց դժբաղդաբար ասիէ մէկ քանի տարի առաջ լուեցաւ թէ, Կոնեօնի երկրագործական վարժարանի Ամերիկեան որթատունկերը ֆիլօքսեալէ բռնուած են, որ իր ջատագովները մեծ տրամութեան և վնասութեան մասնեց այս անյուսալի միջադէպը։ Ոակայն չի կրցանք լսել յետոյ թէ, մինչև ո՞ր աստիճան ստուգուեցաւ։

★ ★ ★

Նուագ տարածութեամբ հողի վրայ ի՞նչ մշակելու է որ տէրը օգտուի կը հարցունէք։

Պատասխան թիւ 8. — առ Մ. Ն. Մ. Իզմիր

Հարցումնիդ շատ ճապաղ է։ Ամեն տունկ երբ յարմար պայմաններու մէջ մշակուի, միշտ շահաբեր կրնայ ըլլալ։ Ուստի ձեզ կը մնայ որոշել մշակելի տունկին տեսակը, և խորհուրդ հարցնել ձեզ ամենէն ընտրելագոյն միջոցներուն վրայ, որոնցմով կարող ըլլաք գոհացուցիչ կերպով շահագործել։ Եւ ոչ մէկ մասնագէտ չի կրնար ձեզ յանձնարարել այս կամ այն մշակութիւնը, իբր շահուէտ, նախ՝ առանց գիտնալու ձեր ունեցած հողին կազմութիւնը, դիրքը և արգասաբերութեան տեսակը։ Երկրորդ, իր տարածութեան որոշ չափը։ Երրորդ տեղւոյդ հրապարակին վրայ, ըլլայ ներքին գործածութեան, ըլլայ արտածութեան համար ամենէն աւելի փնտռուած նիւթերը։

Երկրագործ մը պէտք է օգտուի իր շուրջը ներկայացած աւիթներէն։ Փնտռել, լսել հասկնալու է շարունակ թէ ո՞ր բոյսերն կամ

գիւղատնտեսական ճարտարարուեստի ո՞ր մասնաճիւղերն են որ աւելի չափաբեր կրնան ըլլալ իրեն համար: զորօրինակ, Գերմանիոյ մէջ այսօր խնձոր, տանձ, գեղձ, եւայլնի ընտրելագոյն տեսակները — մասնաւորապէս Եւրոպական տեսակները — շատ կը փնտրուին և աղէկ կը վճարուին — եթէ ունենաք, Պօլսոյ հրապարակն ալ աղէկ կը վճարէ — ձեզ կը մնայ որոշել թէ, փոխադրութեան գիւրութիւն կրնա՞ք ձեռք բերել, թէ անոնց մշակութիւնը յարմար պայմաններու տակ կարելի՞ է ձեր հողին մէջ:

Մենքեհի (գուշ գօմմազ, ասքէռօ) մշակութիւնը չափաբեր է, ունի՞ք գիւրութիւններ: Արքամարը (գմաուլա կամ աղաճ չիլի, Ֆրամպուլազ) նոյնպէս չափաբեր է Պօլսոյ մէջ, Իզմիր ալ կը փնտրուի:

Վերջապէս ո՞ր մէկը ըսեմ, ի՞նչ որ Պօլսոյ համար չափաբեր կրնայ նկատուիլ, նոյն արդիւնքը յառաջ չի կրնար բերել Իզմիրի, Սըվազի մէջ, կամ այլուր: և այսպէս ալ ուրիշ տեղի մը մշակութիւնը Պօլսոյ մէջ: Բայց վերջացնելու համար կրնամ ձեզ ըսել թէ, պարտիզպանական մշակութիւնները ամեն տեղի համար և ամեն ատեն ամենէն չափաւորները նկատուած են, եթէ զանոնք կատարէք կատարելագործեալ զրութիւններով, որպէս զի յաջողիք պզտիկ տարածութեան մը վրայ շատ և շուտ արդիւնք ստանալ, որով և միանգամայն չափաբեր:

Դ. ԲՈԼՍ

## ՇԵՐԱՄԱՐՈՒՄՈՒԹՅՈՒՆԸ



ԲԱՍԹԵՕՌԵԱՆ ԴՐՈՒԹԻՒՆՈՎ


(Շար. 8-ի 8)

Շերամի մշակութիւնը առաջին շրջանին մէջ. — Ինչպէս գիտենք, առաջին շրջանը կը կայանայ ծննդեան օրէն մինչեւ առաջին խորխացումի վերջը, որ կը կատարուի 5 օրուան մէջ: Որդերը կը ծնին ընդհանրապէս առաւօտեան ժամերուն մէջ. թէեւ երբեմն օրուան մէջ ալ ծնողներ կը գտնուին: Այս միջոցին՝ երբ կը տեսնէք թէ չղարչին վրայ

ամեն կողմէն սեւ և մազոտ, պզտիկ որդերը կը սողոսկին և սւտելիք կը փնտռեն, չղարչներուն վրայ թութի նորարողը՝ տերեւներ գնելու է, որոնք՝ երբ որդերով ծածկուին, վերցնելու և բուծարաններուն վրայ տանելու է:

Բուծարանները մասնաւոր կերպով պատրաստուած յարկ յարկ սեղաններ են: Այս սեղանները կը շինեն եղջերներով, կամ թութիինի ոստերով, որոնք 3 հար. մեթր հաստութիւն կ'ունենան. և կամ եթէ կ'ուզէք եղեւնափայտէ գաւազանիկներով, որ հետեւեալ կերպով կ'ընեն:

Փայտէ գաւազանիկները իրարմէ 1—2 հ. մեթր հեռաւորութեամբ իրարու քով կը չարեն, և անոնց վրայ չորս տեղ նոյնպէս փայտէ դօտիներ գնելով կը գամեն, որ ճիշտ վանդակի (գաֆէս) մը յօրինուածքը կ'առնէ: Ասոնց երկայնութիւնը կ'ըլլայ ընդհանրապէս 2—2½ մեթր և լայնութիւնն ալ 70—80 հար. մեթր:



Պատ. 15 — Մեհաղոսայնէ սեղան.

Հոս յիշենք նաեւ Եւրոպայի մէջ պատրաստուած մետաղոստայնէ (թէլ գաֆէս) սեղանները, որոնք բազդատումբ միւսներուն աւելի թեթեւ, գիւրակիր, կանոնաւոր և երկարատեւ կ'ըլլան. և թէ՛ երկաթէ թելերը բարակ և ողորկ ըլլալով, հիւանդութեանց մանրէները (միքրոս) բուսնելու տեղ չեն գտնար, և անոնց մաքրութիւնը, ինչպէս և հականեխումը խիստ գիւրին եղանակով կ'ըլլայ: Եթէ երբեք թերութիւն մը ունին այս մետաղոստայնէ սեղանները, այն ալ քիչ մը իրենց սղութիւնն է. բայց երբ իրենց գիւմացկունութիւնը միւս առաւելութիւններուն հետ նկատողութեան առնենք, այն ատեն սղութիւնը իր նշտնակութիւնը կը կորսնցնէ:

Մետաղոստայնէ սեղանները պատրաստուելու համար, նախ փայտէ չրջանակ (չէրքիվ) մը կը շինեն 75—80 հ. մեթր լայնութիւնով և 2½ մեթր երկայնութեամբ և 3—5

հ. մեթր հաստութիւնով: Շրջանակին երկայնութեամբ 2 տեղ նոյնպէս փայտէ գօտիներով կ'աւորուին, և մետաղաստայնը վրան կը դաւեն: Մէկ տուփ (25 կուսմ) հունտի համար այսպէս 25 սեղան պէտք է:

Ինչպէս ըսինք, երբ նորածին թրթուրները կ'սկսին սողսովիլ չղարշներուն վրայ, պէտք է թթերնի տերեւիկներով վերցնել զանոնք և սեղաններուն վրայ բերել: Ուր առաջուց դուրսած զոյգ մը գօրջ թուղթի վրայ տերեւներ ցանկելով, որդակիր տերեւիկները կը դնեն անոնց մէջ: Որպէս զի՝ այդ տերեւիկներուն ամեն կողմը գտնուած որդերն ալ հաւասարապէս ուտելիք գտնան իրենց տրամադրութեան տակ:

Բուժման ժամանակ գծուարութիւններէ խորշելու համար թրթուրներուն հաւասարութիւնը անհրաժեշտ պէտք մ'ըլլալով, իրենց ծնած ժամանակէն պէտք է այս նախազգուշութիւնը ձեռք առնել: Առ այս՝ ամենէն վերջի ծնածները պէտք է դնել բուժարաններու ամենէն վերի յարկին վրայ: Որովհետեւ սենեկի մը անկէն տաք տեղը իր առանտալին մօտը կ'ըլլայ. ասոր պատճառն ալ, տաք օդը պաղ օդէն թեթեւ ըլլալով վեր ելլան է: Երկրորդ պէտք է այս յետաժիններուն մէկ երկու ճաշ աւելի տալ քան նախաժինները: Այս կերպով սէա դիւրութեամբ ետ մնացողները առաջիններուն հաւասարելով, մէկտեղ կը քնանան և մէկտեղ կ'արթնան: Որով և չեւաւարայծր սաղսկալի շիթթութիւններէ կ'ազատի:

Այսպէս՝ առաջին օրուան ծնածները կը դնէք բուժարաններուն ամենէն վերի յարկին վրայ, և կուտաք մաքրուած և ջարդուած տերեւի 3 ճաշ, առաւօտ, ցորեկ և երեկոյ: Երկրորդ օրը ծնողները կը դնէք միջին յարկը և կուտաք օրը 4 ժուսմ կերակուր: առաջինը զորօրինակ առաւօտեան ժամը 9ին, երկրորդը ժամը 2ին, երրորդը 7ին և չորրորդը 12ին: Իսկ երրորդ օրը ծնողները դնելու է ամենէն վերի յարկներուն վրայ, և յարմարցնելու է 5 ժուսմ ճաշ. և այս կերպով կը յաջողիք առաջին խորխացումէն առաջ հաւասարեցնել զանոնք:

Երբ մաքրուած տերեւ կ'ըսնք, թութերէ և ճիւղերէ զատուած պէտք է հասկնալ, որ կը ջարդեն և այնպէս կուտան, որպէս զի

որդերը զիւրաւ ուտեն:

Եւ որպէս զի որդերուն մէջ հաւասարութիւնը կատարեալ ըլլայ պէտք է առաջին օրուան ամենէն առաջ ծնողները, ինչպէս և վերջի օրուան ամենէն վերջի ծնողները զատել և ոչնչացնել: Որովհետեւ առաջինները միշտ միւսներէն շատ առաջ պիտի մեծնան, իսկ էն վերջիններուն ալ ուշ արթնալնուն պատճառը, տարակոյս չիկայ որ իրենց սկարութիւնն է և մինչեւ իսկ թերեւս ալ հիւանդոտ ըլլան: Մինչեւ որ առաջին խորխացումը (քունը) լրանայ, որդերը թխարանին մօտ սենեկի մը մէջ ձգելու է: Ծնելէն հինգ կամ վեց օր վերջը որդերը կ'սկսին իրենց առաջին խորխացումին: Այն ատեն խոշորացուցով մը կատարելապէս կը տեսնուի, որդերուն քնանալ որոշած տեղերնուն վրայ մետաքսի փոքր և նրբին թելեր, որոնք անշուշտ իրենց արտադրութիւնն է, և կը ծառայեն միմիայն կենդանւոյն մօրթը գտնուած առարկային վրայ փակցնելու, որպէս զի՝ խորխացումի ժամանակ դիւրաւ կարողանայ մօրթէն դուրս ելլալ:

Երբ որդերը քնանալու պատրաստուին, որ կը հասկցուի, անոնց մէջէն մէկ քանիններուն ամենէն առաջ քնանալու սկսելէն, այն ատեն պէտք է ճաշերին թեթեւցնել և յետոյ բոլորովին դադարեցնել, երբ անոնցմէ ոմանք արթնութեան նշաններ ցոյց տան:

Երբ որդերը առաջին խորխացումին կ'ենթարկին, իրենց մօրթը խիստ փայլուն և պիւրի կ'ըլլայ: Գլուխին սեւ և խոշոր կ'ըլլայ: Որովհետեւ ինք իր վրայ կըծկուած ըլլալով, քիչ մ'ալ բարձր կը բռնեն և իրենք ալ անշարժ կը մնան:

Մինչեւ որ խորխացումը լրանայ ուտելիք տալու չէ անոնց: Առանց անպատեհութեան կրնաք 24, 36 և մինչեւ իսկ 48 ժամ անօթի պահել զանոնք, երբ հարկը պահանջէ: Այս կերպով մահաւանդ ժամանակ կ'ունենան իրենց մարսողութեան կազմածը զօրացնելու, և վերջին քնացողները արթննալով, առաջիններուն կը հասնին. և հաւասարութիւնը միշտ կը տիրէ մշակութեան մէջ:

Մէկ տուփ (25 կուսմ) հունտը առաջին խորխացումէն վերջ, ճիշտ վերը յիշուած չափերով մէկ վանդակի տարածութեամբ

տեղ կը դրաւ է, և այդ շրջանին մէջ (5-6 օր) 5-6 քիւօ ալ տերեւ կերած կ'ըլլայ:

Այս առաջին շրջանին մէջ, սրգերուն գրտնուած տեղը պէտք է 19<sup>0</sup> հարիւրարդ տաքութիւն ունենայ, և քնացած ատեննին ալ 18<sup>0</sup> հարիւրարդ:

Սոնաւաշափը պէտք է նշանակէ 70-80 աստիճան: Ահաւասիկ օգտակար գործիք մը, որ պէտք է ամեն կանոնաւոր շերամատուներու մէջ գտնուի:

Սոնաւաշափը հիմնուած է մասնաւոր մէկ քանի նիւթերու սա յատկութեան վրայ թէ, օդին խոնաւութենէն կամ չորութենէն կ'երկարին կամ կը կրճկին: Ամենէն աւելի դործածուած խոնաւաշափները Սօսիւռ անուն գիտնականին հնարածն է. որ կը բաղկանայ մետաղէ ձողակէ մը, որուն վարի կողմը հաստատուած է աստիճանաւոր շրջանակ մը. միւս կողմը կը գտնուի փոքրիկ ճախարակ մը, իր առանցքին վրայ հաստատուած աստիճանացոյց լեզուակ մը:

Ձողակին վերի կողմը պտուտակի մը վարի ծայրը հաստատուած է նասրի ջրով (սօսա-ջուր) իւղատուած (իւղը առնուած) և մաքրուած մազ մը, որ կ'երկարի վար, և ճախարակին վրայ շրջան մ'ընելով կ'իջնէ. վարի ծայրը կապուած է փոքրիկ ծանրութիւն մը:

Շրջանակը 0<sup>0</sup>էն մինչեւ 100 աստիճան նշանակուած է. և եթէ չշրամատան միջնորտը խոնաւ է մազը կ'երկարի, ճախարակը թուլնալով կը դառնայ. և որովհետեւ լեզուակը անոր առանցքին վրայ ամրապնդուած է, անով իր հետը կը դառնայ, ծայրը կը բարձրանայ, և շրջանակին վրայ խոնաւութեան աստիճանը կը ցուցնէ: Սօսիւռի գրութեամբ շինուած խոնաւաշափ մը իր հետ ունենալով ջերմաչափ մ'ալ, կը ծախուի առհասարակ 40-50 դրուչի:

(Շտրուճակելի)

Ղ. ԲՈՒՍ

## ԱՌՏՆԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱՆՔ

Մագեբու պահպանում

Առողջապահական տեսակէտով գլխու մազերը իրենց օգտակարութիւնը ունին, որ

վայելչասիրութեան և արդուզարդի մասին ալ ոչ նուազ կարեւոր տեղ մը կը բռնեն: Անոնք որ ունէ պատճառով հերթափութեան (մազ թափիլ) ենթակայ եղած են, գիտեն թէ ո՞րչափ անտանելի կ'ըլլայ ամենափոքր օդային փոփոխութեան մը ազդեցութիւնը իրենց վրայ, հարբուխի ճանձրալի անհանգստութիւններով. ուստի կ'արժէ որ մեր կեանքի առողջապահութեան վերաբերեալ, այս կարեւոր պէտքին պահպանումը մեր հոգածութեան առարկան ընենք. թէեւ հերթափութեան առաջը առնելու համար շատ տեսակ միջոցներ առաջարկուած են, որոց մէջէն մասնաւորապէս յանձնարարելի է, քինքինայի բուսաբուրդ իր կազդուրիչ յատկութեան համար, բայց մենք այս անգամ պիտի գրենք եղիճի (ըսրկան) վրայ, որ կը յանձնարարէ Տր. Գնայր Պէթօթըր: Ահաւասիկ իւր պատրաստութեան և գործածութեան եղանակը:

Մէկ լիթրա ջուրի մէջ լեցուցէք կէս լիթրա քացախ, և աւելցուցէք վրան 200 կում խիտ մանր ջարդուած եղիճի արմատ, և խաշեցէք այս խառնուրդը կէս ժամու չափ: Պաղելէն վերջը պարզուտէ անցունելով չիշերու մէջ պահեցէք, և ամեն երեկոյ պառկելէ առաջ աղէկ մը չիեցէք գլուխնիդ այս բուսաբուրդ:

★ ★ ★

Դիւերուան օղբ

Ըստ առողջապահութեան կը կարծէինք թէ՛ գիշերուան օգը վատառողջ է, և ասոր համար պատուհանները և ամեն ծակ ու ծակ կը կը գոցէինք. մասնաւորաբար հարցուցած եմ համբաւաւոր բժշկի մը՝ որ պատասխանած է. «Սենեակիդ դուռը և պատուհանները գոցէ, այն ատեն առանց վերմակի ալ կրնաս պառկիլ»: Աստուած իմ, տակաւին ինչե՞ր պիտի լսենք... չեմ գիտեր թէ բժշկութիւնը իւր խանձարուրին մէջ է՝ որ, այսօրուան ըսածը վաղը կը ջրէ. եթէ այդպէս ըլլայ, ուրեմն ինչպէ՞ս մենք կը յանձնենք ինքզինքնիս իրենց, որ ուզածնուն պէս փորձեր ընեն մեր վրայ... Ո՛հ, եթէ մտածենք անտանելի է այս. բայց չէ՛՛ այնքան յառաջ չ'երթանք. թէեւ մեծ վարպետ բժիշկներ նոյն իսկ իրենք խոստովանած են

թէ՛ բժշկութիւնը դեռ նոր ծնած է. սակայն մենք այնպէս կը հաւատանք որ, իւր օրօրոցին մէջ մարդկութիւնը իրմէ մեծ բարիքներ տեսած է, հասկա ապագան...

Սպասենք և հաւատանք ուրեմն:

\* \*

Իրաւ է որ, գիշերուան օգը արեւոս ցորեկուան չափ չոր և առողջ չէ. բայց տարակոյս չիկայ որ, մեր պառկած սենեակին — որուն ամբողջ ծակերը գոցուած կ'ըլլան — օդէն լաւագոյն է:

Տեսէք ինչո՞ւ համար.

Որպէս զի՝ մարդ մը գիշերը պառկած առան առողջապահիկ պայմաններու մէջ գլուխով. պէտք է առաւ և մաքուր օդի մէջ ըլլայ. Իւրաքանչիւր ժամու մէջ մարդ մը 35 խորանարդ մեթր օդ կը ծծէ. արդ՝ ենթադրենք որ 4 մեթր 60 հ. մեթր երկայնութիւն, 3մ. 10 լայնութիւն, և 3 մեթր բարձրութիւն ունենայ պառկած սենեակին, որ հազիւ հազ պիտի պարունակէ 42<sup>1</sup>/<sub>2</sub> խորանարդ մեթր մաքուր օդ:

Ասանկ սենեակ մը երկու հոգւոյ համար բաւական մեծ պիտի դար, այնպէս չէ՞, բայց սխալ է. որովհետեւ՝ այս երկու անձնաւորութիւնները իրենց շնչառութեամբ օդը պիտի ապակրանեն 45 վարկեանի մէջ, անոր պարունակած թթուածինը բնածխային թթուի փոխելով, և մարդկային մարմնոյ ժահահոտ արտաբոյրերով: Շատեր խիստ անշուշտ փորձը իրենց անձին վրայ ըրած են ինքնաբերաբար. երբ առաւօտուն անկողնէն ելլելէն վերջ դուրս կ'ելլան, և յետոյ նոյն պառկած սենեակը մտնելով ծանր հոտ մը կ'զգան, ուր վարկեան մ'իսկ կենալ չեն ուզեր առանց պատուհան մը բանալու, հապա ինչպէ՞ս պառկեցան ամբողջ գիշեր մը այդ ապառոզ օդին մէջ, ես ալ չեմ գիտեր: Ուրեմն պէտք է շարունակ արտաքին օդ ներմուծել:

Ասկէ կը հետեւի թէ՛ երբ երկու անձ միեւնոյն սենեակին մէջ պառկին, իրենց համար 4200 խորանարդ մեթրի չափ մաքուր օդ պէտք է, և առանց այսչափ օդի պիտի ստիպուին շնչել միեւնոյն օդը վեր ի վերոյ 7 ժամուան մէջ, և այսպէսով արիւնը պիտի զրկուի թթուածինի ներկայութենէն, որուն այնքան և միշտ պէտք ունի մարդ:

Եթէ կը փափաքիք կարելի եղածին չափ, գիշերը մաքուր օդ ունենալ. բացէք պատուհանները անկողին մոտենէ՛ք առաջ, և այնքան ալ հոգ մի տանիք որ ծակ մը անգամ բաց չի մնայ: Ո՞վ չի գիտեր արդէն մաքուր օդի օգտակարութիւնը:

ԱՐԱՔՍ

## ԱՐՋԵՍՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Զորաց զանե (աշը) հաճելու միջոց

Երբեմն կը պատահի որ գործի մը համար գաճ կը պատրաստէք, զոր օրինակ լամարներու պատրուգակալները (մաքինաները) ընդունարաններուն փակցնելու առան, և պէտքերնիդ լրանալէն վերջը ամանին տակը կ'աւելնայ, և մնալով կը չորնայ եթէ անմիջապէս ջուրով ցօղուելով մէջէն չի պարպէք. յետոյ երբ ամանին պէտք ունենաք, կ'ստիպուիք դանակի մը ծայրովը կամ երկաթի կտորով մը փորելով մաքրել. շատ մը դժուարութիւններ վերջապէս: Երբ այս տեսակ պարագայի մը մէջ գտնուիք, գործածեցէք հետեւեալ միջոցը, որ դիւրութեամբ զձեզ կազատէ այդ անպատեհութիւնէն. գաւաթ մը ջուրի մէջ խառնեցէք սուրճի գաւաթ մը քլորային թթու (թուզ րուհու) և լեցուցէք չորցած գաճը պարունակող ամանին մէջ, թողուցէք ժամու մը չափ այսպէս, որ գաճը թթուին ազդեցութեան տակ կակուղնալով դիւրութեամբ կը զատուի ամանէն:

\* \*

Ոսկեգօծեալ պղինձէ առարկաները առանց զծգծելու մաքրել

Խնամով լաւ մը իրար խառնեցէք.

|                                                                                                                                                                                         |         |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------|
| Ջուր                                                                                                                                                                                    | 125 կամ |
| Ալբուլ                                                                                                                                                                                  | 50 »    |
| Սպիտակադեղ (իւսթիւպէն)                                                                                                                                                                  | 15 »    |
| Նատրի բնածխատ (սօտա)                                                                                                                                                                    | 7 »     |
| Եւ չաղուելով կակուղ խմոր մը շինեցէք. սպիտակադեղը պէտք է շատ բարակ ծածուած և չղարչէ (թիւլպէնտ) անցած ըլլայ: Մաքրուելիք առարկային երեսը քսեցէք այս խմորէն, թողուցէք որ չորնայ, յետոյ չփե- |         |

ցէք խիստ չոր ասուի (չուխաի) կտորով մը :  
Խոռոչաւոր առարկաները մաքրելու համար  
գործածեցէք ոսկերիչներու խոզանակ (ֆրու-  
չա) մը :

ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏԸ

### ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆԻ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Թիւ 17. — Պօլիս, Ա. Պ. Ն. — Պանանի  
մշակութիւնը ինչպէ՞ս կըլլայ : Նախ պանա-  
նը՝ որ արորժահամ պտուղ մ'է Musaeusete  
ըսուածն է թէ ոչ կամ թէ ուրիշ ի՞նչ ա-  
նուն ունի : մեր կլիմային տակ ինչպէ՞ս կըր-  
նանք մշակել և ե՞րբ, հող չէ պտուղ չի  
կարենայ տալ, միայն ծառը յառաջ բերել  
բաւ է իր տերեւներուն գեղեցկութեան  
պատճառաւ :

Թիւ 18. — Իզմիր, Մ. Ն. Մ. — Կար-  
ծեմ թէ մի ուրիշի կողմէ ձեզ եղած հարց-  
մանց «աղբի համար» պիտի պատասխանէք :  
Խնդրեմ մի մոռնաք յիշելու նաեւ սա կտո-  
րը թէ, մարդու աղբը երբ կը գործածուի  
տանապուռնու անուն մի միջատ յառաջ կը  
բերէ, սա երկայն կազմուածք ունի, բազ-  
մաթիւ ստքերով, սեւագոյն բերնով, առջեւը  
ունեցած դուրս ցցուած երկու ջիղերով՝ հո-  
ղի տակէն քալելով, իր առջեւը եկած նոր  
ծլած բոյսերը կը կտրէ կ'անցնի, սորա վնասն  
այնքան սոսկալի է որ խեղճ երկրագործը  
կը սոսկայ անոր անունէն իսկ. ես ասոր իր-  
եւ դարման 3% քարիւղի ջրով խառնուրդը  
գտած եմ, բայց աս ալ բաւական անմատ-  
չելի լինելուն, խնդրեմ հաճեցէք դիւրին և  
ազդու միջոցներն հրատարակել, որպէս զի  
երկրագործն այդ պատճառաւ չը զրկուի իր  
ամենաարգասաբեր միջոցէն :

Թիւ 19. — Պատասխանեցէք հետեւեալ  
հարցմանցս եւս : Պաղ զարկած որթատունկը  
ի՞նչ ընելու է որ վնասն նուազի դո՞նէ յա-  
ռաջիկայ տարուան համար :

Թիւ 20. — Վարդի իւզը հանելու կերպը  
և ֆօսֆատ տըշօին տունկին տուած օգուտն  
ի՞նչ է, և ո՞րքան է քանակը մի արտավա-  
րի համար :

Թիւ 21. Բանջարեղէնները կանուխ հա-  
ցընելու (թըրֆանտա) միջոցներն ի՞նչ են,  
և նայնը պէտք է՞ ընել նաեւ պտղատու ծա-  
ռերու համար :

Թիւ 22. — Եղեամբ արգիլելու միջոցնե-  
րը կա՞ն, և ի՞նչ են :

Ինչպէս ձեզ յայտնի է այս տարի եղեամբ  
բաւական վնասներ հասցուց, այգիներ և  
պտղատու ծառեր չորցնելով : Բաթաթեւէ  
մեր կրած վնասն կը մուցնէք, որովհետեւ  
ամառյա 5/6ն բաթաթը մասերու բաժնելով  
տնիկցիւնք և մինչև ցարդ ծլելու նշան չէ  
տուած, նոյնպէս և որթատունկերը :

ՊԱՆՏՐՄԱ. — Կ. Գ. Հայպիկեան — Ե-  
րուանդ էֆ. Գէորգեանի յանձնարարու-  
թեամբ Հանրագիտակի թիւերը կ'ստանաք,  
չնորհակալ ենք ձեր զգացմանց և ձեր խոստ-  
ման, Գրիգոր Էֆ. թերթերն ալ զրկեցիք  
վեցամսեայ ընկալագիր ուղարկեցիք մեր  
յարգելի գործակալին :

ՌՏՈՍԹՕ. — Մ. Կ. Մ. — Ստացանք յող-  
ուածէն մաս մը, կը խնդրենք ամբողջացու-  
ցէք :

ՊԵՂՃԻՔԱ. — Մէջ-Էգ-կան. — Ա. և Խ.  
— Թերթերը կ'ստանաք. կ'սպասենք ձեր  
հաւարածական, գիտական և արհեստական  
յողուածներուն :

ՍՐՎԱԶ. — Յ. Գ. — Ստացանք Բիւզան-  
դիոնի Պատ. խմբագրութենէն բաժանորդաց  
ցանկը. չնորհակալութիւն ձեր ջանքերուն.  
ընկալագրերը կը զրկենք :

Թիւ 23. — Պօլիս, Ս. Հ. — Կը փախա-  
քի գիտնալ հաղարջի մշակութեան պարա-  
գաները :

### ՆՈՒԷՐՆԵՐ

Կարապետ էֆ. Սէֆէրեան կը նուիրէ 1  
օրինակ վեցամսեայ Հանրագիտակ Ս. Ներ-  
սեսեան վարժարանի Սամսոնի :

Գ. էֆ. Գ. Պօլիկեան 3 օրինակ տարե-  
կան, կը նուիրէ Այնթապի Ազգ. վարժարա-  
նաց :

Այս նուէրները կ'արձանագրենք սիրով,  
որովհետեւ մեզ կարգ մը նախնիներ եկած  
են աղբատիկ վարժարաններէ՝ խնդրելով  
Հանրագիտակի թիւերն, բնական էր Տնո-  
րինութիւնս չը պիտի կրնար դոհուցնել զի-  
րենք, այս նուէրները որ սկսած ենք արձա-  
նագրել, մեզ յուսացնել կուտան որ կը շատ-  
նան և շատեր բարոյական օգուտ մը ընձե-  
ռած կըլլան, ազգատիկ վարժարաններու  
պճիկ և խելացի ուսանողութեան :

Մեր չնորհակալութիւնը նուիրատու անձ-  
նաւորութեանց :

## ՄԱՐԿԱՆԵՐԷ ՄԻ ԶԱՐԶԱՐՈՒԻՔ

Մշակները որ շատ աւելի կը գտնուին Գուժ-Գաբուի կողմերը, սկսած են իրենց անտանները ներկայութեամբ պատուել:

Մի նեղուիք,

Դիմեցէք Խաչիկ Ֆէսճեանի դեղարանը, Լանկա Ալաճա-Մէսճիտ Թիւ 9, հոն պիտի գտնէք մշուկի փոշի Լաւ, և միանգամայն ամեն գրպանի գիւրամասը իւր:

## ԳՐԲԵՐՈՒ ՅԱՆԿ

Ֆէյսեբայ. — Հեղինակ Գէորգ Էֆ. Թորգոմեան. — Սոյն տաճկերէն հեղինակութեան մէջ կը խօսուի ֆիլօքսերայի վնասներուն և դարմաններուն վրայ: Գին 100 փարայ:

Հէրէի Պետրալըցի. — Լինհարտ և Գերտուդ. — Մանկավարժական վիպակ: Գին 5 զրուշ:

Դաւիթ Թրանսապուլայ — Մարգարանուծիւն. — Տ. Կ. Զարգարեան 1870. Թրգմ. Ս. Ղուկասեան էջ 133. — Սոյն գրքի մէջ կը խօսուի մարդկային տեսակին. ծագում մարդոյ և այլեւայլ շահեկան ներթոյ վրայ, թէեւ մոռցուած գիրք մը կրնայ իր նորութիւնը ունեւալ, Գին զեղչեալ 3 1/2:

Կիւսիւնի Երբեքէն Կարաբէ Կիւսիւ. — Հեղինակ իշխանուհի Ուռուսով 1894, էջ 147. — Մանկավարժական հարցերով զրադոյններու կարեւոր: Գին 5 զրուշ:


Վալլ և Կարաբուս Ժամանակ. — Թրգմ. Օր. Ն. Յ. Էռասեան. — Խիստ բարոյական երկու վիպակներ կը պարունակէ: Գինը 6 զրուշ:

Օւստոս Դեզլ. — Հեղինակ Տր. Գլեման. Թրգմ. Ե. Մուրատեան. — Ոյր մէջ կը խօսի գիշութեան և այլ հիւանդութեանց վրայ: Գին 5 զրուշ:

Ստանական Ինքիւն. — Երեք մասէ բաժկացեալ սոյն հատորիկը՝ որ կը պարունակէ 1. Նոյնը և իր զաւակունք, 2. Մա-

խու ապրանք, 3. Էրիկ կնիկ. — Շատ սիրուն կերպիւ նկարագրուած է մեր վարքն ու բարքը ամուսնական խնդիրներու մէջ: Գին 4 զրուշ:

Կը վաճառուի Զարգարեան Գրատունը: Գաւառները կը զրկուին սոյն գներով, առանց բաժախ յաւելումի:



ՀԱՆԿ-ԲՈՆԿ-ՍԷՅԼԱՆ-Կ. ՊՈԼԻՍ

Մեծ ՎԱՅԱՌԱՏՈՒՆ ԹԵՅՍ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍՏԳՈՒԼԵԱՆ

Ճէլալ պէշ խանի դրան կից, քիւ Ռ

Ամենէն լաւ թէյերու ամենէն ընդարձակ վաճառատունը Կ. Պոլսոյ մէջ, որ ճիւղեր ունի Օսմ. Տէրութեան ամէն կողմերը: Գաւառներու, յանձնարարութիւնները փութով և խնամով կը կատարուին:

Չինական, Հնդկական, Ճաւայի և Սէյլանի էն աղնիւ թէյերէն ուղղակի բերուած, կը գտնուին հոն:

Չգուշանալ սոյն վաճառանիշին կեղծերէն:

Փնտուել ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍՏԳՈՒԼԵԱՆ Ստորագրութիւնը:

— 1895 —

Հանրապետիկ կը հրատարակուի ամեն Շաբաթ օր կանոնաւորապէս :  
 Կը պարունակէ Դրական , Դիտական , Երկրագործական , Տնտեսական , Արհեստական եւայլն , եւայլն . շահեկան նիւթեր :  
 Երկրագործական , Արհեստական եւ Իրաւաբանական հարցումներու միշտ պատասխանները կը տրուին մասնագէտներու ձեռքով :  
 Բաժանորդագրութիւնք և թղթակցութիւնք ուղղելի են առ Տնօրինութիւն Հանրապետիկ լրագրի

Կ. Պոլիս, Զարդարեան Գրասուն, Զագմաֆըրար-Յօգուու քիւ 50

در علیہدہ چقماچیلرہ ۵۰ نومرولی زارطاریان کتبخانہ سندنہ (حاضر اقداق) مجموعہ علوم غریبہ سی ادارہ سندنہ

Հանրապետիկ՝ պատրաստ է ընդունիլ ամեն տեսակ ծանուցումներ , ազդարարութիւններ , խիստ գիւրամատչելի պայմաններով : Հրատարակիչներէ կը խնդրուի իրենց երկերէն զրկել երկու օրինակ , զոր պիտի ազդարարենք հասարակութեան , կարեւորներուն վրայ ընելով մեր քննադատումը :

ԳՈՐԾԱԿԱԼՔ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ

- |                                             |                                        |
|---------------------------------------------|----------------------------------------|
| ԱՅՆԹԱՊ . — Գարեգին էֆ . Պօղարեան            | ԿԻՐԱՍՈՐ . — Արմենակ էֆ . Սօմունճեան .  |
| ԱՏԱ-ԲԱԶԱՐ . — Ստեփան էֆ . Սալգրիչեան        | ԿԵՍԱՐԻԱ . —                            |
| ԱՐԱԲԿԻՐ . — Յ . Պ . էֆ . Մանուէլեան .       | ՄԱՐԱՇ . — Արժ . Տ . Յովհաննէս քահանայ  |
| ԱԹԵՆՔ . — Մկրտիչ էֆ . Մանուկեան .           | Վարժապետեան .                          |
| ԳՈՒՐՏ-ՊԵԼԵՆ . — Արժ . Տ Ստեփան քահանայ      | ՄԱՆՃԵՍԹՐ . — Յակոբ էֆ . Բոլատեան .     |
| ԳԱՀԻՐԷ . — Մ . Պաղտատար էֆ . Ս . Նաթանեան . | ՄԱՐՁՈՒԱՆ . — Յովհաննէս էֆ . Յակոբեան . |
| ԷՐՁՐՈՒՄ . — Եդ . էֆ . Տ . Ապարեան .         | ՄԱՐՍԻԼԵԱ . — Նաղարէթ էֆ . Զարդարեան .  |
| ԹԵՀՐԱՆ . — Կարապէտ էֆ . Բարարեան .          | ՄՈՒՇ . — Գեղամ էֆ . Տ . Կարապետեան .   |
| ԻԶՄԻՐ . — Կարապետ էֆ . Մալէճանեան .         | ՊԱՆՏԵՐՄԱ . — Արմենակ էֆ . Ս . Մարեան . |
| ԻԶՄԻՏ . — Աբրահամ էֆ . Կոտաճեան .           | ՊԱՐՏԻՋԱԿ . — Վահան էֆ . Ճիլունի .      |
| ՄԱԼԿԱՐԱ . — Վ . Մանուկ էֆ . Զօլաքեան .      | ՊՐՈՒՍԱ . — Օննիկ էֆ . Լուիֆեան .       |
| ԽԱՐԲԵՐԴ . — Խոսրով էֆ . Քէշիշեան .          | ՌՈՏՈՍԹՕ . — Յովհաննէս էֆ . Տէմիրեան .  |
| ԿԵԼԻՊՈԼՈՒ . — Յովսէֆ էֆ . Տէր-Յովսէֆեան .   | ՍԱՄՍՇՆ . — Կարապետ էֆ . Սէֆէրեան .     |
|                                             | ՍԸՎԱԶ . — Յ էֆ . Կարակէօղեան .         |
|                                             | ՏՐԱՊԶՈՐ . — Սահակ էֆ . Էթմէքճեան .     |

ԳՐԱՏՈՒՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

Գիրք գնել , կուգէ՞ք , դիմեցէ՞ք Զարդարեան Գրասունը . հոն միշտ պիտի գտնէք ամեն ուզածերդ եւ միշտ զեղջով :

Հանրապետիկ կը ծախուի ամեն լրագրովաճառաց քով , մասնաւորաբար

- Հանկա , Խաչիկ էֆ . Ֆէսճեան Դեղարանը ,  
 Սամաթիա , Կայարանը թիւթիւնճիւ Արթին աղաի խանութը ,  
 Մազրի-Գիւղ , Պօղոս էֆ . Աղիւստեանի խանութը ,  
 Գատը-Գիւղ , Լեւոն էֆ . Զպուքճեան դեղարանը ,  
 Սիւլտար , Փիշթօֆճեան էֆ . խանութը ,  
 Բերա , Մեծ փողոց Գառնիկէֆ . Կիւլէրեանի խանութը :